


Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Բարի Սամարացին



Written by: Edward Hughes
Illustrated by: M. Maillot; Lazarus
Adapted by: Ruth Klassen: Sarah S.
Alastair Paterson
Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife
gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.
Produced by: Bible for Children
www.M1914.org

BFC
PO Box 3
Winnipeg, MB R3C 2G1
Canada

©2020 Bible for Children, Inc.
License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.

"Ուսուցիչ, ի՞նչ պետք է ընեմ,
որ յաւիտենական կեանք
ունենամ": Այս հարցում
հարցնող մարդը
փաստաբան էր,
կը փորձեր
Յիսուսին
խաբել:

"Ի՞նչ կ'ըսէ Աստուծոյ
օրէնքը", Յիսուս պատասխանեց:

1

2


"Միրէ Աստուած ու քու դրացիդ", ըսաւ մարդը: "Բայց ո՞վ է իմ դրացիս":



3

Պատասխանելու համար մարդուն հարցումին, Յիսուս պատմութիւն մը պատմեց մարդու մը, որ կը ճամբորդէր Երուսաղէմէն Երիբով: Մարդը յարձակումի ենթարկուեցաւ

գողերու կողմէ:




4

Գողերը ամէն ինչ որ գտան գողցան, նոյնիսկ դժբախտ ճամբորդին հագուստները:



5

Անոնք նաեւ զայն ծանր վիրաւորեցին, կէս մահացած թողնելով ճամբուն եզերքը:



6

Բարեբախտաբար քահանայ մը կ'անցներ այնտեղէն: Անշուշտ որ պիտի օգնէր վիրաւոր մարդուն:




7

Ո՛չ: Երբ տեսաւ մարդուն արիւնլուայ վիճակի մէջ, ճամբուն հակառակ կողմէն գնաց:



8

Քիչ ետք ոտքի ձայներ լսուեցան ուրիշ անցորդի մը: Ան դեւտացի է, այսինքն՝ մէկը, որ քահանաներուն կ'օգնէր տաճարին մէջ:



9

Գնաց եւ նայեցաւ վիրաւոր մարդուն, յետոյ առանց օգնելու գնաց:




10

Վերջապէս Սամարացի մարդ մը եկաւ: Հրեաները կ'ատէին Սամարացիները:



11


Ժողովուրդը կը լսէր Յիսուսի պատմութիւնը եւ չէր ընդունէր, որ Սամարացին ըլլար պատմութեան հերոսը: Բայց այդպէս էր: Սամարացին հոգաց եւ կանգ



առաւ օգնելու համար:


12

Սամարացին ծունկի եկաւ եւ նրբօրէն դեղեց եւ փաթեց օտարին վերքերը: Ետը օգնեց վիրաւոր մարդուն, որ իր էջը հեծնէ:



13

Ճամբու վրայի պանդոկի մէջ Սամարացին շատ լաւ հոգ տարաւ մարդուն ամբողջ երեկոյ:



14

Առաւօտուն ան պանդոկի տիրոջ վճարեց, որպէսզի լաւ հոգ տանին ճամբորդին մինչեւ լաւանայ:



15

Պատմութիւնը վերջացաւ: Յիսուս հարցուց. "Ո՞վ էր դրացին, որ վիրաւորեց մարդուն":



16



Փաստաբանը պատասխանեց. "Իր դրացին Սամարացին էր, որ գթութիւն ցուցաբերեց":

17

"Քնայ եւ դուն ալ նոյնը ըրէ", ըսաւ Յիսուս: Դրացի մը ամէն ոք է որ պէտք ունեցած ատենդ կը հասնի օգնութեան: Կրնանք սեր ցոյց տալ օգնելով մարդոց, որ պէտք ունին: Այո՛, որ կը գոհացնէ Աստուծոյ:



18

Բարի Սամարացին


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ղուկաս 10

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130

19



46



60 20

Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեզը կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՛ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16